Բովանդակություն

ՆԱԽԱԲԱՆ	ix
ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ	xiii
ԳԱՂՏՆԻՔԸ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ Է	1
ԳԱՂՏՆԻՔԸ ՀԱՍԱՆԵԼԻ Է	27
ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱՌԵԼ ԳԱՂՏՆԻՔԸ	45
ՀԶՈՐ ՄԵԹՈԴՆԵՐ	71
ՓՈՂԻ ԳԱՂՏՆԻՔԸ	95
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՔԸ	113
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ	127
ԱՇԽԱՐՀԻ ԳԱՂՏՆԻՔԸ	143
ՁԵՐ ԳԱՂՏՆԻՔԸ	159
ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՔԸ	181
ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	190

Նախաբան

2004 թվականին կյանքս փուլ եկավ: Հայրս հանկարծամահ եղավ: Աշխատանքս ինձ ուժասպառ էր արել, իսկ գործընկերներիս ու իմ սիրելի մարդկանց հետ ունեցածս հարաբերությունները շատ լարված էին: Այդժամ մտքովս էլ չէր անցնի, որ իմ մեծագույն հուսահատությունից ծնվելու էր կյանքիս մեծագույն պարգևը:

Ինձ նշմարվեց Մեծագույն Գաղտնիքը՝ Կյանքի Գաղտնիքը: Այն առաջին անգամ հանդիպեցի հնամենի մի գրքում, որն ինձ աղջիկս՝ Հեյլին էր տվել: Սկսեցի Գաղտնիքի հետքերը փնտրել պատմության խորքերում և ապշեցի, երբ պարզեցի, որ պատմության մեծագույն մարդիկ՝ Պլատոնը, Շեքսպիրը, Նյուտոնը, Հյուգոն, Բեթհովենը, Լինքոլնը, Էդիսոնը, Էյնշտեյնը, նրանք բոլորն էլ իմացել են դա:

Պարզապես անհավատալի էր: Հետաքրքիր էր՝ ինչո՞ւ *բոլորը* չգիտեն դա: Ինձ համակեց Գաղտնիքն աշխարհին պատմելու բուռն ցանկությունը, և ես սկսեցի փնտրել Գաղտնիքն իմացող կենդանի մարդկանց:

Նրանք մեկ առ մեկ սկսեցին ի հայտ գալ: Ես դարձա մագնիս. երբ սկսեցի որոնումներս, մեկը մյուսի ետևից դեպի ինձ սկսե-

ցին ձգվել մեծ վարպետներ: Երբ գտնում էի մի ուսուցչի, նա կատարյալ շղթայով կապվում էր հաջորդին: Եթե սխալ ուղով էի ընթանում, մեկ այլ բան գրավում էր ուշադրությունս, և այդ շեղման արդյունքում հայտնվում էր հաջորդ մեծ ուսուցիչը: Եթե համացանցով ինչ-որ բան որոնելիս «պատահաբար» սխալ էջի հղմամբ էի անցնում, բախվում էի կենսական տեղեկության: Ընդամենը մի քանի շաբաթվա ընթացքում ինձ հաջողվեց Գաղտնիքի հետագծով գնալ դարերի խորքը և հայտնաբերել Գաղտնիքի ներկայիս գիտակներին:

Գլխումս շարունակ մի միտք էր պտտվում. Գաղտնիքը աշխարհին ներկայացնել ֆիլմի տեսքով: Հետագա երկու ամսում իմ՝ կինոարտադրության և հեռուստատեսության թիմն իմացավ Գաղտնիքը: Խիստ անհրաժեշտ էր, որ թիմի յուրաքանչյուր անդամ իմանար դա, որովհետև առանց այդ իմացության անհնար կլիներ անել այն, ինչ մենք մտադիր էինք անել:

Ֆիլմի աշխատանքներում ներգրավված ոչ մի ուսուցիչ չունեինք, բայց գիտեինք Գաղտնիքը: Ուստի ես աներկբա հավատով Ավստրալիայից մեկնեցի Միացյալ Նահանգներ, որտեղ և մեծ մասամբ ապրում էին ուսուցիչները: Յոթ շաբաթ անց Գաղտնիքի թիմն արդեն նկարահանել էր ԱՄՆ-ում սփռված 55 մեծագույն ուսուցիչների՝ ստեղծելով շուրջ 120 ժամ տևողությամբ ֆիլմ: Մեր ամեն քայլով, ամեն շնչով մենք կիրառում էինք Գաղտնիքը՝ ստեղծելու համար *«Գաղտնիքը»* ֆիլմը: Մենք բառացիորեն մագնիսի նման դեպի մեզ էինք ձգում ամեն ինչ և ամենքին: 8 ամիս անց *«Գաղտնիքը»* էկրան բարձրացավ:

Ֆիլմը գրավեց աշխարհը, և մեզ սկսեցին հեղեղել հրաշքի մասին զանազան պատմություններով. մարդիկ գրում էին քրոնիկական ցավից, ընկճախտից և հիվանդությունից բուժման, դժբախտ պատահարից հետո առաջին անգամ քայլելու և նույ-

նիսկ մահվան մահճից ոտքի կանգնելու մասին: Մենք հազարավոր նամակներ ենք ստացել առ այն, որ Գաղտնիքն օգտագործվել է փոստով մեծ գումարներ և արտակարգ չեկեր ստանալու համար: Մարդիկ կիրառել են Գաղտնիքը՝ իդեալական տուն, կյանքի ընկեր, մեքենա, աշխատանք և նոր պաշտոն ձեռք բերելու վերաբերյալ իրենց մտքերն իրականություն դարձնելու համար: Ոմանք նաև փաստում էին, որ Գաղտնիքի կիրառումից հետո մի քանի օրվա ընթացքում իրենց բիզնեսը ծաղկում է ապրել: Մեզ հասել են նաև մի շարք արտաշարժ պատմություններ այն մասին, թե ինչպես են անգամ երեխաների ներգրավվածությամբ լարված հարաբերությունները, ի վերջո, վերականգնել իրենց ներդաշնակությունը:

Ամենահոյակապ պատմությունները ստացել ենք հենց երեխաներից, որոնք կիրառել են Գաղտնիքը, որպեսզի իրենց կողմը ձգեն այն, ինչ ցանկանում են, այդ թվում՝ բարձր գնահատականներ և ընկերների: Գաղտնիքը շատերի համար է ոգեշնչման աղբյուր դարձել՝ նպաստելով, որ բժիշկները կիսեն գիտելիքն իրենց այցելուների, համալսարանները և դպրոցները՝ իրենց ուսանողների, առողջապահական ակումբները՝ իրենց հաճախորդների, բոլոր դավանանքների հոգևոր կենտրոնները՝ իրենց ծխականների հետ: Աշխարհի տարբեր տներում անցկացվում էին Գաղտնիքի երեկույթներ, որոնց ընթացքում մարդիկ իրենց գիտելիքները կիսում էին սիրելիների և ընտանիքի անդամների հետ: Գաղտնիքը կիրառվել է ամենատարբեր բաները դեպի քեզ ձգելու նպատակով՝ մի յուրահատուկ փետուրից մինչև տասը միլիոն դոլար: Եվ այս ամենը տեղի է ունեցել ֆիլմի թողարկմանը հաջորդած մի քանի ամսվա ընթացքում:

«Գաղտնիքը» ստեղծելիս ցանկանում էի և այժմ էլ ցանկանում եմ, որ այն ուրախություն պարգևի աշխարհի միլիարդավոր մարդկանց: *«Գաղտնիքի»* թիմն ամեն օր զգում է այդ նպատակի իրա-

գործումը, երբ մենք ստանում ենք բազմահազար նամակներ աշխարհի տարբեր ծայրերում ապրող մարդկանցից՝ անկախ նրանց տարիքից, ռասայական և ազգային պատկանելությունից. նրանք իրենց երախտագիտությունն են հայտնում Գաղտնիքի պարգևած ուրախության համար: Չկա մի բան, որ չկարողանաք անել այս գիտելիքով: Էական չէ՝ ով եք դուք կամ որտեղ եք գտնվում, Գաղտնիքը կարող է տալ ձեզ այն ամենը, ինչ ցանկանում եք:

Քսանչորս հիասքանչ ուսուցիչներ են ներկայացված այս գրքում: Նրանց խոսքերը ձայնագրվել են Միացյալ Նահանգների տարբեր ծայրերում տարբեր ժամանակահատվածներում, բայց և այնպես նրանց բառերն ընդհանրանում են մեկ ձայնի մեջ. ասես մի մարդ խոսի: Գրքում իրենց տեղն են գտել Գաղտնիքի ուսուցիչների խոսքերը, ինչպես նաև Գաղտնիքի՝ գործնական կիրառության վերաբերյալ զարմանահրաշ պատմություններ: Ես ձեզ հաղորդակից եմ դարձրել այն բոլոր հեշտ ուղիներին, կյանքի խորհուրդներին ու դյուրանցումներին, որոնք ինքս եմ սովորել ժամանակի ընթացքում, որպեսզի կարողանաք ապրել ձեր երազած կյանքով:

Գիրքն ընթերցելիս կնկատեք, որ որոշ տեղերում «Դուք» բառը մեծատառով եմ գրել: Պատճառն այն է, որ ես ուզում եմ, որ Դուք՝ իբրև իմ ընթերցող, զգաք և գիտակցեք, որ ես այս գիրքը Ձեզ համար եմ ստեղծել: Երբ ասում եմ Դուք, անձամբ ձեզ հետ եմ զրուցում: Ցանկանում եմ, որ Դուք անձնական կապվածություն զգաք այս էջերի նկատմամբ, քանի որ Գաղտնիքը ստեղծվել է հենց Ձեզ համար:

Գրքի էջերը շրջելիս ու Գաղտնիքը բացահայտելիս Դուք կպարզեք, թե ինչպես կարող եք ունենալ, լինել և անել այն ամենը, ինչ ցանկանում եք: Դուք կհասկանաք, թե ով եք Դուք իրականում: Դուք կգիտակցեք Ձեր իրական վեհությունը, որ սպասում է Ձեզ:

Ամբողջական գիրքը կգտնես

ԱՅՍՏԵՂ